

ՍԵՒ ԼԵՌՆԵՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՆ ԸՍՏ Հ. Ղ. ԱԼԻԾԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ

Կիլիկիայի հայկական պետութեան պատմական աշխարհագրութեան խնդիրները հայագիտութեան նուիրեալներից շատերին են հետաքրքրել, սակայն այս ասպարէզում Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամ, Բագմալէս ամսագրի երկար տարիների անփոխարինելի խմբագիր Հ. Ղեւոնդ Ալիշանի վաստակը բացառիկ է: Եթէ սկսած Հ. Միքայէլ Չամչեանցից, Մխիթարեան հայերին (Հ. Ղ. Ինճիճեան, Հ. Ոսկեան եւ ուրիշներ) հետաքրքրում էր Կիլիկիայի հայկական պետութեան առանձին բնական վայրերի եւ որոշակի տեղանունների տեղադրութիւնը, ինչպէս նաեւ լանդշաֆտն իր հիմնական գծերով, ապա Հ. Ղեւոնդին հետաքրքրում էր Կիլիկիայի պատմական աշխարհագրութիւնը թէ՛ մանրութների, եւ թէ՛ ամբողջութեան մէջ, ներառեալ տարածաշրջանի պատմամշակութային դերը: Այս առումով հայագիտութեան համար երբեք իր նշանակութիւնը չի կորցնի «Սիսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ» (Վենետիկ, 1885) մեծարժէք մենագրութիւնը, որը նրա երկու տասնամեայ տքնաշան աշխատանքի արդիւնքն է եւ բազմաթիւ հատուածներում սկզբնաղբիւրի նշանակութիւն ունի: Բացառիկ է այս հետազոտութիւնը նաեւ այն առումով, որ Մխիթարեան միաբանը երբեք չի եղել իր նկարագրած տարածքներում, սակայն կարողացել է համադրութեան մէջ դնելով պատմական սկզբնաղբիւրները եւ ականատեսների վկայութիւնները՝ ստեղծել երկրամասի ամբողջական պատմաաշխարհագրական պատկերը, փորձել է քարտէզի վրայ տեղադրել մատենագրութեան մէջ աւանդուած տեղանունները, միաժամանակ՝ ընդգծելով դրանցից շատերի մշակութային նշանակութիւնը: Միւս կողմից էլ պիտի հաշուի առնել, որ նրա կողմից կատարուած տեղադրութիւնների մեծ մասը պայմանական բնոյթ ունեն եւ հիմնուած են սկզբնաղբիւրների, երբեմն՝ եզակի տեղեկութիւնների վրայ: Հայագետները յաջորդ սերունդն, օգտագործելով նախորդների փորձը, իր

առջեւ խնդիր պէտք է դնի ճշգրիտ տեղադրել Կիլիկիայի տեղանունները եւ ձգտի հնագիտական պեղածոյ նիւթով հաստատել մատենագրական սկզբնաղբիւրներից յայտնի վանքերի, եկեղեցիների, ամրոցների ու բնակավայրերի տեղադրութիւնը: Մատենագրական սկզբնաղբիւրներից եւ պարբերական մամուլից այդ նիւթերն հաւաքելու գործն իրենց վրայ են վերցրել Վիեննայի Մխիթարեան միաբան Հ. Համազասպ Ոսկեանը, որի աշխատանքի հրապարակումից յետոյ փորձել է որոշ տեղադրական ճշտումներ մտցնել մարաշեցի բժիշկ Յարութիւն Տէր-Ղազարեանը: Յիշատակման է արժանի նաեւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Միքայէլ Յովհաննէսեանը, որն ի մի է հաւաքել Կիլիկիայի բերդերի մասին մատենագրական վկայութիւնները: Մինչ այժմ կատարուած տեղադրական ճշտումների մի նշանակալի մասը՝ ամրոցների կտրուածքով, նախորդ դարավերջին կատարել է ամերիկացի հետազոտող Ռ. Էդվարդսը¹, որի գործը յաջողութեամբ շարունակել են աւստրիացիներ Ֆ. Հիլդն ու Հ. Հելլէնկեմպերը²: Նման աշխատանք 50-60-ական թթ. անձնական միջոցներով ձեռնարկել էր սիրող-պատմաբան Միսաք Զեւահրիմեանը, որը 1950-ական թթ. բազմիցս շրջապելով Կիլիկիայում, իր տեսածը վերածել է քարտէզի եւ բացատրական յուշագրքի³: Ափսոս, որ ցայսօր դրանք հրապարակուած չեն:

Հայոց եկեղեցու եւ Կիլիկիայի պատմութեան համար առանձնաշատուկ նշանակութիւն ունի Կիլիկիան Հայաստանի պատմութեան հետ սերտօրէն կապուած Սեւ լեռան տեղադրութիւնը, որի վանքերում ԺԱ. դարի վերջերից սկսած ստեղծուել են Հայոց մշակոյթի եւ մատենագրութեան բազմաթիւ գլուխ-գործոցներ, որոնք վկայուած են ձեռագրերի յիշատակարաննե-

- 1 EDWARDS, R. W., *The Fortifications of Armenian Cilicia*, Washington 1987 (Dumbarton Oaks Studies 23); (այս գրքի Ա. Զարեանի եւ իմ գրախօսութիւնը տե՛ս Պատմա-քանասիրական հանդէս, 1987, 204-206); Նոյնի, *Ecclesiastical Architecture in the Fortifications of Armenian Cilicia*. – Dumbarton Oaks Papers 36, (1982), 155-176: Նոյնի, *Ecclesiastical Architecture in the Fortifications of Armenian Cilicia: Second report*. – Dumbarton Oaks Papers 37 (1983), 123-146:
- 2 HIELD, Fr., und HELLENKEMPER, H., *Kilikien und Isaurien*, 1 Teil, Wien 1990, S 175 [Tabula imperii Byzantini, Bd. 5, Österreichische Akademie der Wissenschaften, philosophisch-historische Klasse, Denkschriften, 215. Band 1-2] (այսուհետեւ՝ TBI, t. 5, 1-2):
- 3 Հայաստանի գիտական պարբերականներում հրապարակուած հատուկեմ յօդուածները ամբողջական պատկերացում չեն տալիս նրա կատարած հրակածաւալ աշխատանքի մասին:

րում: Հ. Ղեկոնդը Սեաւ լեռան վանքերում հայկական մշակութային գործունէութեանը աւելի վաղ անդրադարձել է նաեւ «Շնորհալի եւ պարագայ իւր» (Վենետիկ, 1873) գիտապատմական էսսէում եւ մի շարք այլ՝ «Բագմավէպ» ամսագրում հրապարակուած աշխատութիւններում⁴, սակայն «Սիսուան»-ը այս բնագաւառում Մխիթարեան հօր ամենամբողջական յղացումն է: Նրա բոլոր վերջնական հետախուզումներն ամփոփուած են այստեղ: Յենուելով իր ժամանակի եւրոպական գիտական հետազոտութիւնների եւ տարածաշրջանի աշխարհաքաղաքական նկարագրութեանը նուիրուած աշխատութիւնների վրայ, Հ. Ղեկոնդը հայկական սկզբնաղբիւրներում յիշատակուած Սեւ լեռները նոյնացնում է Ամանոսեան լեռնաշղթայի հետ: «Ըստ հին աշխարհագրաց, Ամանոս (ὁ Ἀμανός, τὸ Ἀμανόν, Amanus) լերինք՝ քաղուկ մի համարին Տաւրոսական լեռանց, այլ անջատք, եւ ի կողմանց Կատաունեաց՝ ի հիւսիսոյ՝ ձգեալ ընդ հարաւ ցափունս Ասորւոց երկրի, եւ ընդ արեւելս՝ ցեփաւտ գետ...»⁵: Ելնելով լեռնաշղթայի ժամանակակից թուրքերէնում «Գարատաղ» անուանումից, Հ. Ղեկոնդը համարում է այն յունարէնի «Μῶρος ὄρος»-ի եւ ասորերէնի՝ «Թուրա ուշամայի» թարգմանութիւնը: Ըստ նորագոյն հետազոտողների, հնում այդ լեռներն արաբներն անուանում էին Ջէբել ալ Լուկամա, իսկ Աբուլ-Ֆիդան կոչում է Ջէբել ալ Արման⁶: Ըստ Հ. Ղեկոնդի արաբները կարամանների պատուին այդ լեռներն անուանում են Ջէբել ալ-Կարաման, իսկ քրիստոնեաների բնակութեան պատճառով՝ «Կեաւուր տաղի»⁷: Ամանոսի լեռների հիւսիսային մասն անուանում է նաեւ «Ագմա-դաղ», միջին հատուածը՝ «Գզըլտաղ» կամ «Պէլլան-տաղ», իսկ հարաւայինը. «որ ի Հոռոսոս գաւառի՝ Քէսրիկ-տաղ, եւ ըստ ոմանց Չէպէլ Մուսա, որ եւ յանգի ի (Խոզագլուխ) սարն Ռասխանձիր, ուր եւ աւարտ է սահմանաց Կիլիկիոյ. իսկ որ անտի եւ անդր ձգին շարունակքն լերինք՝ ի հեռումն կոչէին Պիերանք»⁸: Նկատելի է, տարածաշրջանի լեռների մէկից աւելի անուն ունենալու պարագան, որն էլ բարդեցնում է միջնադարեան եւ այսօրուայ անուանումների նոյնացման խնդիրը:

4 Տե՛ս Բագմավէպ, 1885, 397-400; 1886, 90 եւն:

5 Ա.ԼԻՇԱՆ, Միսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ 1885 (այսուհետեւ՝ Ա.ԼԻՇԱՆ, Միսուան), 403:

6 Տե՛ս *Amanus* քառայոյդուածը. TBI, t. 5, 1:

7 Ա.ԼԻՇԱՆ, Միսուան, 403:

8 Անդ:

Դրան ուղեկցում է մէկ այլ բարդութիւն եւս: Տարածաշրջանի գրեթէ բոլոր հայկական տեղանունները անուանափոխուել են: Մի կողմից դա օսմանեան կայսրութեան մէջ բնակուող հայերի նկատմամբ Թուրքիայի պետական անհանդուրժողական ազգային քաղաքականութեան հետեւանքն է, միւս կողմից՝ բազմէթնիկ տարածաշրջանի բնակիչները՝ Թուրքեր, ասորիներ, արաբներ, հայեր, քրդեր եւն. վաղուց ի վեր գործածել են տեղանունների իրենց ստեղծած տարբերակները կամ անուան թարգմանութիւնը: Կը ցանկանայի շեշտել միայն, որ Հ. Ղեւոնդի յիշատակած Ճէպէլ Մուսան (Djebel Moussa) համապատասխանում է Ֆրանց Վերֆելի վէպից յայտնի Մուսա դադին (լեռանը), որը, ցաւօք, յիշատակուած չէ Ֆ. Հիլդի եւ Հ. Հելլէնկեմպերի հրապարակած, Կիլիկիային նուիրուած հատորում (տե՛ս TBI, t. 5, 1-2): Խնդրի կարեւորութիւնը կայանում է այն փաստի մէջ, որ արեւմտեան հետազոտողները փորձել են խուսափել նշանաւոր վէպի եւ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին յիշատակուած լեռան շրջակայքում տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնների տարածքի նոյնացումից, քանի որ այն յիշեցնելու էր օսմանեան բռնատիրութեան դէմ մի բուռ հայ ազգաբնակչութեան պայքարի պատմութիւնը: Կիլիկիա երկրամասի պատմութեան միջնադարեան շրջանին անդրադարձած այլ հետազոտութիւններում եւս, որոնց հեղինակները կախում են ունեցել Թուրքական թանգարաններում պահպանուող նիւթերից, հայկական թագաւորութեան վկայակոչումն իսկ ժամանակ առ ժամանակ քողարկուել է: Հետազոտողները զգուշացել են Թուրքիայի պաշտօնական պատմագրութեան ներկայացուցիչների, հնագէտների ու թանգարանների աշխատակիցների հետ բախումներից, աւելորդ անգամ չանդրադառնալով Կիլիկիայում Հայոց պետականութեան գոյութեան պատմութեանը, լուրթեան մատնելով անգամ հայերէն լեզուով գրուած արձանագրութիւնների առկայութեանը, քանի որ նման յիշեցումները կարող էին փակել ներանց մոտքը դէպի Թուրքիայի թանգարանային պահոցներ⁹:

9 Այս առումով յատկանշական է Ֆրանսիացի հետազոտողների հրապարակած, Կիլիկիայի վիմագիր արձանագրութիւններին նուիրուած հատորը տե՛ս DAGRON, G. et DE. FEISSEL, D., *Inscriptions de Cilicie* / avec la collaboration de A. Hermay, J. Richard et J.-P. Sodini, Paris, De Boccard, 1987 [Travaux et Mémoires du centre de recherche d'histoire et civilisation de Byzance. Collège de France. Monographies, 4]: Այս գրքի մասին տե՛ս ԲՈՅՈՅՆԱՆ, Ա., *Կիլիկիա*

Տարածաշրջանի եւրոպացի հետազոտողներից շատերն իրենց աշխատանքներում հիմնականում շեշտադրել են անտիկ եւ բիզանդական շրջանի ճարտարապետութեան, քանդակագործութեան, մոզայիկայի եւ վիմագրական (յունարէն, լատիներէն երբեմն էլ՝ ասորերէն եւ արաբերէն) գտածոների կարեւորութիւնը¹⁰, լուծեան մատնելով հայկական մշակութային շերտի առկայութիւնը:

Ալիշանը նկարագրելով Ամանոսի լեռնաշղթան, ընդգծում է, որ այն հիւսիսից հարաւ ձգւում է Մարաշից մինչեւ Անտիոք: Հ. Ղեւոնդը Սեւ լեռները նոյնացնելով Ամանոսի հետ, դրանց մէջ է ներառում նաեւ Ամանոսի յարակից լեռնաշղթաները, որոնք գնում են հիւսիս, արեւելք եւ արեւմուտք, դրանով իսկ անհարկի ընդարձակելով մեզ հետաքրքրող տարածաշրջանը՝ ընդգրկելով նաեւ Քուրդ դաղ (լեռնաշղթան), որը սկսւում է Տլուքի մօտակայքից եւ ձգւում է դէպի Քեսուն եւ Ռապան, բաւական ընդարձակ տարածք զբաղեցնելով Ամանոսեան լեռների եւ Եփրատի միջեւ¹¹: Ամանոսեան լեռները հիւսիսից հարաւ ձգւում են շուրջ 175 կմ, իսկ լայնութիւնն է 15-30 կմ¹², եթէ նկատի ունենանք մինչեւ Եփրատ հասնելու եւ Տլուքի գաւառը Ամանոսեան լեռների մէջ ներառելու Ղ. Ալիշանի գաղափարը, կարող ենք ասել, որ ըստ Մխիթարեան միաբանի Ամանոսի լեռները տեղ-տեղ լայնութեամբ ձգւում են աւելի քան 70-80 եւ աւելի կմ: Սա բաւական հսկայածաւալ մի տարածաշրջան է, որն ընդգրկում է աւելի քան 18 հազար քառակուսի կմ տարածութիւն: Որպէսզի ընկալելի դառնան հեռաւորութիւնները, նշենք, որ Անտիոքից Մարաշ շուրջ 170 կմ է, իսկ Անտիոքից մինչեւ Ռապան՝ աւելի քան 200 կմ: Մարաշից Ռապան ուղիղ գծով շուրջ 85 կմ է:

Հ. Ղեւոնդ Ալիշանը «Շնորհալի եւ Պարագայ իւր» աշխատանքում կարեւորեց ԺԲ դարի սկզբին Գող Վասիլի իշխանու-

երկրամասի յունարէն եւ լատիներէն արձանագրութիւնների նորագոյն հրատարակութիւններ ի Պատմա-քանասիրական հանդէս, 1991, 2, 218-219:

- 10 St'a Antioch-on the-Orontes, I: *The Excavations of 1932*, Princeton 1934; II: *The Excavations 1933-1936*, Princeton 1938; III: *The Excavations 1937-1939*, Princeton 1941; IV.1: *Ceramics and Islamic Coins*, Princeton 1948; IV.2: *Greek, Roman, Byzantine and Crusaders' Coins*, Princeton 1952; V: *Les portiques d'Antioche*, Princeton 1972, ևն.:

11 TBI, 15, 1, S. 174.

12 TBI, 5, 1, S. 174.

թեան տարածքում Հայոց կաթողիկոսական իշխանութեան յայտնուելը: Հ. Մ. Զամչեանին եւ նրա հետեւորդներին հակադրուելով, Ծով դղեակը տեղադրեց Տլուք գաւառում, մերժելով Խարբերդի մօտակայքում այդ բնակավայրի տեղադրութիւնը, որը հայագիտութեան մէջ կարծրացած կարծիք էր դարձել: Տլուք գաւառում՝ Քեսունի եւ Ռապանի մօտ, նա տեղադրեց նաեւ Կարմիր եւ Շուղր անապատները, հիմնուելով Մատթէոս Ուռհայեցու տեղեկութիւնների վրայ, որն այդ վանքերը կապում է Սեւ լեռան հետ: Ցաւօք, Հ. Ղեւոնդը «Սիսուան»-ում չխորացրեց իր նկատառումները՝ Սեւ լեռներն ամբողջովին նոյնացնելով Ամանոսեան լեռնաշղթայի հետ, ինչպէս տեսանք վերելում: Մօտաւորապէս բնութագրելով տարածաշրջանը, եւ Ամանոսեան լեռները նոյնացնելով Սեւ լեռների հետ, Հ. Ղեւոնդը դրանց մասին գրում է. «...լերիմքս՝ մինչեւ Սուրբ անուանիլ սոցա իբր յատուկ անուամբք, որով հոչակին ստէպ առ պատմիչս մեր ի ԺԱ.-ԺԳ. դարս, իբրեւ գերծ եւ անոյթ դադարք հոգեսիրաց, կրօնաւորաց եւ անապատականաց այլ եւ այլ ազգաց, որոց երեք գլխաւորք, Հայք, Ասորիք եւ Յոյմք, երեցուն եւս աշխարհացն միջաստիւման գոյով տեղւոյն. յորս յարեցան եւ Վրացիք, ապա եւ Լատինք յաւուրս Խաչակրաց»¹³: Ալիշանն իրաւացիօրէն Սեւ լեռների վանական հաստատութիւնները համեմատում է Աթոսի, Սինայի եւ Լիբանանի նոյնաբնոյթ վանական կենտրոնների հետ:

Հետեւելով եւրոպական պատմագրական աւանդոյթին, Սեւ լեռները Ամանոսի հետ է նոյնացնում Հիւսիսային Ասորիքի Խաչակրաց դարաշրջանի պատմութեան ի դարի լաւագոյն մասնագէտներից մէկը՝ արեւելագէտ Կլ. Կահենը, նկատի ունենալով միայն Անտիոք – Մարաշ լեռնաշղթան¹⁴: Մինչեւ 1939 թ. Որոնտեսի գետաբերանից հիւսիս եւ հարաւ գտնուող տարածքներում հնագիտական հետախուզումներ է կատարել Բէյրութի համալսարանի պրոֆ., յիսուսեան կրօնաւոր Հ. Ժան Մըսրըեանը: Նրա հետազօտութիւնները նուիրուած են Անտիոքից արեւմուտք գտնուող տարածքի, Որոնտեսի հովտից հիւսիս գտնուող Մուսա լեռան¹⁵ ու նրա շրջակայքի, ինչպէս նաեւ գետահովտից հարաւ

13 Ա.ԼԻՇԱՆ, *Սիսուան*, 405:

14 CAHEN, Cl., *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Paris 1940, 140-148 (այսուհետեւ՝ CAHEN, Cl., *La Syrie du Nord*).

15 Հ. Ժան Մըսրըեանի քարտեզում Սեւ լեռը (Montagne Negra) Ամանուսի հարաւային լեռնախմբից մէկն է, որը գտնուում է Մուսա լեռից հիւսիս,

գտնուող Սքանչելի եւ կասիոս կոչուած լեռների հնագիտական նախնական հետազոտութեանը¹⁶: Վերջինս գտնուում է ժամանակակից Քեսաբ բնակավայրի մօտակայքում¹⁷: Սակայն նրան չի յաջողուել գտնել այս տարածքում հակաքաղկեդոնական հայոց եկեղեցու գործունէութեանը վերաբերող ճարտարապետական յուշարձաններ: Թէպէտ նրա կողմից յայտնաբերուած վրացերէն արձանագրութիւններից մէկը վկայում է հայոց քաղկեդոնական եկեղեցու գոյութիւնը Անտիոքի գաւառում¹⁸: Այս տարածաշրջանում, Որոնտեսի գետաբերանից հիւսիս եւ հարաւ գտնուած վանքերի գործունէութեան հետ են կապում նաեւ վրաց մատենագրութեան Ժ.-ԺԲ. դդ. մի շարք նշանաւոր գործիչների գործունէութիւնը: Վ. Ջոբաձէն, ով փաստօրէն 1970-ական թթ. շարունակել է Ժ. Մըսրբեանի կիսատ թողած տարածաշրջանի հնագիտական հետազոտութիւնը Ֆրանսիացիների կողմից 1939 թ. գաւառը Թուրքիային յանձնելուց յետոյ¹⁹: Տ. Բոագի եւ Մ.

տե'ս MÉCÉRIAN. J., *Expedition...*, 15 (գրքի ամբողջական յղումը տե'ս յաջորդ ծանօթագրութեան մէջ):

16 MÉCÉRIAN, J., *Expédition archéologique dans l'Antiochène Occidentale*. – Mélanges de l'Université Saint-Joseph, 40, Beyrouth 1964, 1-144; Նոյնի, *Les inscriptions du Mont Admirable*. – Mélanges de l'Université Saint-Joseph, 38 (1962), 295-330: Առնուազն տարօրինակ է, որ Ամանուս-Սեւ լեռների մասին յօդուած պարունակող TBI-ի 5 հատորի հեղինակները լռութեան են մատնում, քէ' Մուսա լեռ տեղանունը, եւ քէ' Բէյրութի Սէն Ժոզեֆ կաթոլիկ համալսարանի պրոֆ., յիսուսեան կրօնաւոր Հ. Ժան Մըսրբեանի հետազոտութիւնները, 1939 թ. առաջ տարածաշրջանում կատարուած հնագիտական մասնական հետախուզումների արդիւնքների մասին:

17 TODT, K.-P., und VEST, B., *Syria (Syria Prôtē Syria Deutera, Syria Euphratēsia)*, Wien 2014, p. 1378 [Tabula Imperii Byzantini, Bd. 15, 1-3, Österreichische Akademie der Wissenschaften, philosophisch-historische Klasse, Denkschriften, 438 Bd.] (այսուհետեւ՝ TBI, 15, 1-3).

18 MÉCÉRIAN, J., *Expedition...*, p. 111-112, Pl. XC, fig. 244:

19 DJOBADZE, W., *Vorläufiger Bericht über Grabungen und Untersuchungen in der Gegend von Antiochia am Orontes*. – Istanbuler Mitteilungen 15 (1965), 218-242; Նոյնի, *Medieval Inscriptions in the Vicinity of Antioch on-the-Orontes*. – Oriens Christianus 49 (1965), p. 116-130, նոյնի, *Materials for the Study of Georgian monasteries in the Western environs on the Orontes*. – Louvain 1976 (Corpus Scriptorum Christianorum Orientalium 372, Subsidia 48), նոյնի, *Archeological Investigations in the Region West of Antioch on-the-Orontes*. With Contributions by M. Hendy, N. Lowick, C. Mango, D.M. Metcalf and H. Seirig, Stuttgart 1986 (Forschungen zur Kunstgeschichte und christlichen Archäologie 13), նոյնի, *Georgians in Antioch*

Թիերիի²⁰ աշխատանքների վրայ շեշտադրելով, Ռ. Հիւսընը Կիլիկեան Հայաստանի Սեւ լեռը տեղադրում է Կիլիկիայի եւ Ամանոսեան լեռների ծայր հարաւում²¹, հաշուի չառնելով բազմաթիւ հայկական սկզբնաղբիւրների վկայութիւնները, որոնք Սեւ լեռան վանքերը (Կարմիր եւ Շուղր) տեղադրում են Քեսոնի մօտակայքում՝ Տլուք գաւառում: Վիեննայում հրապարակուող TBI շարքի 2, 5, 15 հատորների համար եւս Ամանոսը նոյնանում է Սեւ լեռների հետ, որի համար էլ հեղինակները խուսափել են տեղադրել Կարմիր վանքը եւ նրան յարակից հայկական սկզբնաղբիւրներում յիշատակուած վանքեր:

Այնուամենայնիւ, Հայոց մատենագրութեան մէջ յիշատակուող Սեւ լեռներում գտնուող վանքերի հիմնական մասը բաւական հեռու են բիւզանդական մատենագրութեան մէջ վկայուած Սեւ լեռների վանական շրջանից: Սեւ լեռների հայկական վանքերն ամենայն հաւանականութեամբ գտնւում են Ամանոսեան լեռների արեւելքում՝ Քեսոն-Ռապան-Տլուք գծի վրայ, Եփրատ գետի աջ ափին գտնուող լեռնաշղթայի դեռեւս մեզ անյայտ հատուածում: Այդ շրջանը միջնադարեան հայկական սկզբնաղբիւրներում անուանւում է Տլուք գաւառ, որը գտնւում էր ի «կողմանս Եփրատացոց»: Այս տարածքը ամենայն հաւանականութեամբ անտիկ Կոմագենէի տարածքն է, որը Տլուքի մօտակայքից, Եփրատի աջ ափով ձգւում էր հիւսիս եւ հասնում մինչեւ Մելիտանէ: Ի դէպ հ. Ղեւոնդ Ալիշանը եւս «Շնորհալի եւ պարագայ իւր երկում», 1873 թ. հակադրուելով հ. Միքայէլ Չամչեանին, Ծով դղեակը ենթադրաբար տեղադրել է այստեղ. «Ուրեմն այս տեղս իրենց առջի քնակած տեղէն՝ Սեա լեռանց վանքերէն՝ շատ հեռու չէր. Աթոռն քիչ քիչ կամ իբր ռոն ռոն կը տեղափոխէր. հաւանօրէն Մարաշու եւ Այնթապու միջոց տեղ մ'էր. վասն զի հաստատութեամբ կ'ըսուի որ Անտիոքայ Լատին իշխանութեան սահման

on-the-Orontes and the Monastery, in: *Die Christianisierung des Kaukasus / The Christianisation of Caucasus (Armenia, Georgia, Albania). Referate des Internationalen Symposions (Wien, 9. – 12. Dezember 1999)*. Hrsg. Von W. Seibt, Wien 2002, S. 37-53 (Österreichische Accademie der Wissenschaften, phil.-hist. Klasse, Denkschriften 296).

- 20 BOASE, T. S. R., ed., *The Cilician Kingdom of Armenia*, New York 1978, 146-147; THIERRY, M., *Répertoire des monastères arméniens*, Turnhout: Brepolis, 1993, 52.
21 HEWSEN, R., *Armenia Maritima: The Historical Geography of Cilicia*, in: *Armenian Cilicia / Ed. By R. Hovhannisian and S. Payaslian*, Costa Mesa, California: Mazda Publishers, inc., 2008, 39.

էր, եւ յատուկ գաւառն Տլուք կ'ըսուի...»²²: Ալիշանի համար հիմնական կռուան է ծառայել այն հանգամանքը, որ հայկական սկըզբնաղբիւրներում Սեւ լեռան վրայ յիշատակուած վանքերը գտնւում են Քեսուն եւ Ռապան քաղաքների մօտակայքում: Հ. Ղեւոնդի գծած յստակ ճանապարհով իր հետազօտութիւնը ձեռնարկած Տ. Բաբկէն Կիւլէսէրեանը, կարողացաւ վերջնականապէս սրբադրել Հ. Միքայէլ Չամչեանցի եւ Հ. Գարեգին Սրուանձտեանցի կողմից գիտական գրականութիւն մտած սխալը, ըստ որի Ծով դղեակը տեղադրւում էր Խարբերդի լճի վրայ: Տլուք գաւառի բնակավայրերից մէկի՝ Ծով ամրոցի տեղադրութեան ճշգրտումն է երջանկայիշատակ աթոռակից կաթողիկոս Բաբկէն Կիւլէսէրեանի աշխատութեան նպատակը, որն մասնագէտների շրջանում համընդհանուր ընդունելութիւն է գտել²³, թէպէտ այն դեռեւս բաւական մակերեսային եւ ենթադրական է, քանի որ հնագիտական կամ վիմագրական հաստատում չունի: Սեւ լեռան տլուքեան տեղադրութիւնը տրամաբանական է համարում նաեւ հայր Տաճատ Եարտըմեանը²⁴: Թէպէտ խնդիրը դեռեւս բաց է մնում, այնուամենայնիւ, չափազանց տրամաբանական է Հ. Ղեւոնդ Ալիշանի ենթադրութիւնը՝ հայկական Սեւ լեռները Տլուք-Մարաշ-Ռապան եռանկիւնում փնտրելու տրամաբանութիւնը:

Ա.ՋԱՆ ՌՈԶՈՅԱՆ

22 ԱԼԻՇԱՆ, *Շնորհալի*, 96:

23 ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ, Բ., *Ծով-Տլուք եւ Հռովկայ (Քարտէսով միասին)*. Պատմական եւ տեղագրական ուսումնասիրութիւն, Վիեննա 1904 (Ազգային մատենադարան, ԽԵ): Տե՛ս E. HONIGMANN, *Le couvent de Barsauma et le patriarcat Jacobite d'Antioche et de Syrie*, Louvain 1967 (CSCO, Vol. 146, Subsidia, t. 7), p. 90, K.-P. TODT und B. A. WEST, *Syria (Syria Prōtē, Syria Deutera, Syria Euphratēsia)*, Wien 2014 (TIB, Bd. 15, 2), S. 1070:

24 ԵԱՐՏՈՒՄԵԱՆ, Տ., *Քեսունի Կարմիր վանքը*, Վեներիկ, Ս. Ղազար 1976 [չափիտական մատենաշար «Բազմավէպ», քիւ 10], 12-24:

Summary

MONASTERY COMPLEXES OF BLACK MOUNTAINS ACCORDING TO THE LOCALIZATION OF L. ALISHAN.

AZAT BOZOYAN

The long-term editor of “Bazmavep” Journal- L. Alishan was the first in Armenian Studies to place the Black Mountains into the map based on multilingual sources. Initially, the author had been localized the mentioned Mountains on the Mountain range located between the Euphrates and Mount Amanus. However, taking into account information of foreign primary sources and scientific researches, Alishan adhered to localize the Monastery complexes mentioned in Armenian bibliography on Mount Amanus in his “Sisuan” Monograph (1885).